

ՊԱՆԶԵԱՅԻ ՊԱՅԱՅԻ

Ե. ԼԵԼԵՑԵՆԻ

ՄԵԼԵԿՍԵՆԵՐ



անձակի գաւառի¹⁾ ռուս աղանդաւոր մալականները, որ բնակուած են Նովո-Սարատովկա, Նովո-Իվանովկա, Ռուսաց Պարիս և Միխայելովկա գիւղերում, Տամբովի և Սարատովի նահանգներից են գաղթած անցեալ դարու երկրորդ կիսին: Սրանք ընդամենը 491 տուն են, 1536 արական և 1221

իգական, ի միասին՝ 2827 հոգի: Մեծամասնութիւնը բուն մալականներ կամ Վոսկրեսնցիներ են, 1124 արական, 1001 իգական, իմիասին՝ 2125 հոգի. մնացածից՝ 203 արական և 127 իգական, իմիասին՝ 330 հոգի սուրբոտնիկներ են, իսկ 134 ար. և 103 իգ. ի միասին՝ 237 հոգի պրիզուներ²⁾:

¹⁾ Տես Ազգ. Հանդէս Ե. և Զ. գրքեր:

²⁾ Բացի իմ անձնական նկատողութիւններից, որ արել եմ մալականների մասնաւորապէս Պարիս և Միխայելովկա գիւղերում, օգտուել եմ նաև հետևեալ աշխատութիւններից. Юзовъ. Русскіе диссиденты: Старовѣры и духовные христіане. Дангелъштедтъ. Кавказскіе сектанты въ ихъ семейномъ и религіозномъ быту. Բրոկհաուզի Հանրագիտական բառարան և զանազան յօդուածներ «Кавказъ» լրագրի հետևեալ համարներում. 1858 № 13 և 15. 1864 № 35, 1873 № № 135, 136, 143 և 145. 1897 № № 188 և 199.

ՊԵՏՄԵՆՆԵ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մալականների աղանդը յառաջ է եկել դուխորորների աղանդից և պաշտպանել է նրա վարդապետութեան և ծէսերի մեծ մասը: Աղանդի հիմնադիրն է Սիմէօն Ուկլէին (ապրել է XV^{III} դարի 2-դ կիսում.) Տամբովի նաՀանգի Բորեսգլերսկի դաւառի մի գիւղացի: Գերձակութեամբ պարապելով՝ նա անցնում էր գիւղից գիւղ, երբ պատահեց դուխորորների աղանդի հիմնադիրներից մինին, Պորեթոխինին, ամուսնացաւ նրա աղջկայ Հետ և ընդունեց դուխորորների աղանդը: Հինգ տարուց յետոյ սրանք միմեանցից Հեռացան, որովՀետև Ուկլէինը չէր ընդունում, որ կրօնական ճշմարտութեան միակ աղբիւրը ներքին ներշնչումն լինի: Բաժանուելով դուխորորներից, Ուկլէինը մօտեցաւ Տվերիտինովի բողոքական րացիօնալիստական վարդապետութեան Հետևողներին, որ բաւականաչափ կային Տամբովի նաՀանգում, և իւրացնելով նրանց վարդապետութիւնը, կազմեց մի առանձին աղանդ. եօթանասուն «առաքեալներով» շրջապատուած նա Հանդիսաւոր կերպով, սաղմոսներ երգելով մտաւ Տամբով, ուր ոստիկանութիւնը նրանց բոլորին էլ բանտ ձգեց: Կատարինէ Բ. կայսրուհին Հրամայեց յանձնել նրանց Հոգևոր իշխանութեան Համոզելու, և եթէ չեն վերադառնալ մայրենի եկեղեցուն՝ բոլորին դատի ենթարկել: Ուկլէինը բերանացի կերպով Հրաժարուելով իւր վարդապետութիւնից, արձակուեց, բայց յետոյ կրկին սկսեց քարոզել: Նրա կեանքի վերջին տարիներում Տամբովի, կամ այժմեան Սարատովի և Վարոնէժի, նաՀանգում կային մինչև 5000 Հետևողներ: Յետոյ այս աղանդը տարածուեց Աստրախանի և Եկատերինսլաւի նաՀանգները, ինչպէս և Կովկաս:

Մալական անունը յատկացրել են այս աղանդին դեռ 1765 թուին Տամբովի Հոգևոր կոնսիստորիայի կողմից, այն Հիման վերայ, որ այս աղանդաւորները պատին կաթ (молоко) են գործածում: Իրենք աղանդաւորները իրենց «Հոգևոր քրիստոնէաներ» են անուանում և իրենց ընդունած մալական անունը բացատրում են նրանով, որ իրենց դաւանած վարդապետութիւնը

այն «բանաւոր կաթն» է, որի մասին խօսուած է Ս. Գրքի մէջ: (Կոր. III. 2. Եւր. V. 12. Պետր. II. 2 և այլն): Մալականները դուխորներին նման բոլորովին մերժում են օրդոդօս եկեղեցին, նրա խորհուրդները և ծէսերը, սրբերի, մասունքների և պատկերների պաշտամունքը, բայց և տարբերում են դուխորներից Հաւատոյ աղբիւրների ուսուցմամբ և միջանի դաւանանքների ինքնատիպ Հասկացողութեամբ: Հաւատի ուսուցման միակ աղբիւր, մալականների կարծիքով, կարող է լինել միայն Սուրբ Գրքի Հին և Նոր կտակարանները: Ս. Գրքից դուրս չկայ կրօնական ճշմարտութիւն: Քրիստոսի Հիմնած եկեղեցին դուլութիւն է ունեցել մինչև Գ. դարը: Ընդհանրական ժողովները և եկեղեցու Հայրերն իրենց կանօնադրութիւններով և աշխատութիւններով խնդաթիւրեցին իսկական քրիստոնէութիւնը, նշանակութիւն տուին աւանդութիւններին, և կազմեցին աստիճանաւորութիւն (ієрархія), որին մալականները, իրենց Ս. Գրքի քրիստոնէութեան իսկական ներկայացուցիչներ Համարելով, չեն վերագրում մի որևէ արտակարգ բարելից շնորհ: Միայն մի քահանայապետ կայ՝ Քրիստոս, բոլոր մարդիկ՝ եղբայրներ են, բոլորը Հաւասար են «շնորհօք»: Մալականների ծերունիները (старцы), նրանց կրօնուսույցներն են, և ոչ թէ քահանաները կամ ուսուցիչները, որովհետև Աստուծոյ չեն կրում մի առանձին լիազօրութիւն: Այս կէտերում չիկարելի չտեսնել բողոքականութեան ազդեցութիւնը Տվերիտինովի Հետևողների վարդապետութեան միջոցով:

Մալականներն իրենց ծիսակատարութեանց գրքի մէջ (обрядники) ուսուցանում են, որ Աստուած Հոգի է երեք անձնաւորութեան մէջ: „Изложение учения Ученья“ գրքի մէջ ասուած է, սակայն, թէ Որդի Աստուածը և Ս. Հոգին թէև Համագոյակից են Հօրը, բայց աստուածութեամբ Հաւասար չեն նրան: Աստուածորդու ծնունդը Ս. Կուսից նշանակուած է ոչ թէ իսկական մարդկային մարմին առնել, այլ այն մարմինը, որ ըստ մալականների, ունէր Ռափայէլ Հրեշտակապետը, երբ ընկերակցելով Տորիային, տեսանելի եղաւ նրան և խոսակցեց նրա Հետ, այս մարմինը Աստուածորդին երկնքից բերեց և նրա Հետ բնակեցաւ Կուսի արգանդում: Նմանապէս, Յիսուս

Քրիստոսը չմեռաւ այնպէս ինչպէս մեռնում են մարդիկը, այլ մի առանձին եղանակով: Մեռեալների յարութիւնը տեղի պիտի ունենայ, բայց բոլոր մարդիկը յարութիւն պիտի առնեն ուրիշ մարմիններով և ոչ այն, որոնց մէջ ապրում էին երկրիս վրայ: Որպէսզի կարողանան մերժել օրդոդաքս եկեղեցուն դռնաւաճ խորհուրդները, պասերը, պատկերները և այլն, որոնք մեծ մասամբ հիմնուած են Ս. Գրքի վրայ, որը իրենք մալականները չեն կամենում մերժել, նրանք դիմում են Ս. Գրքի ալլաբանական բացատրութեան, հիմնելով իրենց այս տեսակ բացատրութիւնը Ս. Գրքի այսպիսի խօսքերի վրայ թէ «տառը սպանում, հոգին կենդանացնում է», «Աստծուն պէտք է երկրը պազել հոգով և ճշմարտութեամբ», և այլն: Այսպէս՝ մերժելով ջրով մկրտութիւնը, նրանք այդ խօսքով իմանում են Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը, այն «կենդանի ջուրը», որի մասին խօսւում է Յովհ. VII. 38 Համարում: Հաղորդութեան խորհուրդը հիմնելով առաքեալի այն խօսքերի վրայ, թէ մարմինը չի օգտւում ոչնչից՝ մալականները ուսուցանում են, թէ Քրիստոսի մարմինը Քրիստոսի վարդապետութիւնն է և որ «Աւէք կերէք այս է մարմին իմ» խօսքիւր նշանակում են ընդունեցէք իմ վարդապետութիւնը: Ամուսնութիւնը խորհուրդ չէ, որովհետեւ առաքեալը խօսելով այդ մասին, խորհուրդ է համարում միայն Քրիստոսի միութիւնը եկեղեցու հետ: (Եփես. V. 3). Ապաշխարութիւնը կալանում է միայն մեղքի մերժման մէջ, որովհետեւ չի կարող ուրիշի մեղքերը ներել նա, ով ինքը մեղք է գործում: Օծումն ու դրօշմը հոգեւոր օծման խորհրդանշաններ են: Գրօշմի ժամանակ հիւանդին փրկում է ոչ թէ օծումը, այլ հաւատքը, աղօթքը: Իրենց ծիսակատարութեանց մէջ մալականները աշխատում են ընդօրինակել առաքելական եկեղեցին, նրանք մերժում են խնկարկութիւնը, կանխեղները, մոմերը, տաճարները, որպէս առանձին, որոշ ձևով շինուած շէնքեր, միայն սահմանափակում են Ս. Գրքի ընթերցանութեամբ և եկեղեցու ընդունած աղօթքներն երգելով կամ կարդալով:

Մասնաւորելով մեր բոլոր ասելիքները բուն մալականն-

րի կամ վոսկրեսնցիների վրայ, Հարկաւոր ենք Համարում, ստիպին, աւելացնել, որ գաւառումս ընակուած ստիպաւթիւ սուրբողնիկները տարբերում են վոսկրեսնցիներից գլխաւորապէս նրանով, որ փոխանակ կիրակի օրուայ, շաբաթ օրերն են տօն պահում, իսկ պրիգունները շաբաթ կամ տօն օրերի գիշերային խմբական աղօթքի միջոցին Աստղիկին են նուիրում: Սակայն այս սովորութիւնը Հետզհետէ վերանում է: Մեկէս այսպէս է նկարագրում այդ. Նովո-Սարատովկա գիւղում մի գիշեր գնացի պրիգունների աղօթատունը, ուր տղամարդիկ, կանայք և աղջիկներ կարգին նստած էին. Հերթով մինը կարդում էր, իսկ միւսները խմբով կրկնում էին տուն առ տուն: Կամաց կամաց աղօթողներն սկսեցին օրօրուել, ոտներով խփել, յետոյ յանկարծ ճրագը Հանգցրին և...: Քսան ըսպէից յետոյ ճրագը նորից վառուեց, ամէնքը տեղերը նստեցան և սկսեցին երգել. «Հոգի, զարթիր, սթափուիր» (душа, проснися, встрепенися¹⁾).

ԲՆԱԿԱՐԱՆ

Իւրաքանչիւր տուն բոլորովին առանձնացած է և իւր առաջ ունի բաւական ընդարձակ զաւիթ, ուր գտնուում է բաղանիսը, խնուր, խոտանոցը և շտեմարանը: Բնակարանը բաղկանում է երկու սենեակներից, որոնց դռները բացւում են մի նախասենեակի մէջ: Սենեակները երբեմն քառակուսի, բայց շատ անգամ քառանկիւնի են լինում. եթէ ոչ երեք, գոնէ երկու կողմից երկական կամ մի մի պատուհաններով: Յատակը ու առաստաղը տախտակած են լինում, բայց ոչ երբեք ներկած: Սովորաբար սենեակներից մինում, առաւելապէս փոքրում, լինում է երկար ռուսական փուռ, մօտը իւր պարագաները դրած, միւս սենեակը ժաքացնում են առաւելապէս թիթեղեայ վառարանով և շատ քչերի մէջ կան փուր: Սենեակի պատերին կից ձգւում են նեղ ու հրկար նստարաններ, իսկ անկիւններում փայտէ պահարաններ: Միջանի նեղ ու երկար նստարաններ, որ մօտեցնելով պատերին կից նստարաններին կազմում

¹⁾ Кавказъ. 1864 г. № 35.

են մայականի մաՀճակալը, մի անկիւնում դրուած Հասարակ փայտէ սեղանը, որի վրայ կախուած է մի փոքրիկ լամպ, մի քանի աթու (ТАБУРЕТКА), մի երկու արկղ, — ահա սրանք են կազմում սենսակի ամբողջ կահաւորութիւնը:

Տները քարաշէն են, կտուրը եռանկիւնաձև, կղմինտրով ծածկուած:

Տան երկու կողմը կան փոքրիկ պատշգամբներ:

ՀԱՆԴԵՐՁ

Տղամարդի մնց. Նախ կարմիր կամ կապուտ չիւց կարած շապիկ են Հագնում, որի փէշերը թողնում են անտրավարտիկի վրայ, և ոչ թէ դնում անդրավարտիկի մէջ, ինչպէս սովորաբար անում է: Թեւքերը երկար են և կոճկում են դաստակի մօտ: Վարտիկ չեն գործածում, այլ միայն անդրավարտիկ, որ կարում են չիւց կամ իրենց պատրաստած կտաւից: Նրա ծայրերը դնում են կօշիկների մէջ, որ Հասնում է մինչև ծնկները:

Ջապիկի վրայից Հագնում են ժիլետկա, որ անթև է և կրծքի վրայ ամբողջովին կոճկում:

Աշխատելիս սովորաբար ժիլետով կամ միայն շապկով են մնում, միայն այս վերջին դէպքում գօտի են կապում: Փիլետի վրայից Հագնում են պաղդէօվկա (ПОДВЕСКА), որ կարում է շվեդական կիսամահուդից, իջնում է մինչև ծնկները, մէջքի վերայ փոքր ինչ սեղմուելով: Երկու կողքերին կայ մի մի գրպան: Կոճկում է միայն մի կողմի վերայ և բկի մօտ օձիքը լետ է ծալուած:

Գլխներին ծածկում են կարտուզ, լայն կզիրոկով, իսկ ձմեռը ցածր, կտորից կարուած փափախ, որի վերին մասը թաւշեայ է լինում: Ձմեռը ոմանք ոչխարի մորթուց կարած մուշտակ են Հագնում:

Ոտներին Հագնում են գուլպայ և երկար վզով կօշիկներ:

Կանանց. Ջապիկը կարում են կարմիր չիւց. իջնում է մինչև ոտները: Սրա վրայ Հագնում են իւրկա ըմբադէից կամ չիւց, սա ծածկում է ոտները և Հասնում մինչև մէջքը, ուր և ամրապնդում է: Իւրկայի վրայից Հագնում են սարաֆան, որ

մէջքի վրայ սեղմուելով բարձրանում է մինչև կուրծքը: Երկու ժապավէն ուսերի վրայ անցնելով պահում են այս հանդերձը:

Սարաֆանի վրայ կապում են կարմիր չթից գոգնոց և հագնում *կոֆտա*, որ հասնում է մինչև մէջքը, երկար թեւեր ունի և կրծքի վրայ կոճկւում է:

Ձմեռը այս բոլորի վրայից հագնում են *արխալուխ* (архалухъ), սև կամ կապտագոյն կտորից. սա բամբակած է. մէջքի վրայ բիւզմայով սեղմւում է և իջնում մինչև ծնկները: Կուրծքը մինը միւսի վրայ դալով կոճկւում է: Աջ կողմում կայ մի գրպան:

Գլխներին՝ աղջիկները միայն մի կարմիր եալուխ են կապում, իսկ կանայք՝ նախ մի եալուխ (платокъ) եռանկիւնաձև ծալում, ճակատի վրայով անցկացնում կապում են ծոծրակին և ապա, մի ուրիշն էլ ձգում վրայից և կապում ըկի տակ:

Ոտներին հագնում են գուլպայ և կիսակօշիկ կամ տուֆլի:

Ընդհանրապէս կանանց շորերը կարճ են, այնպէս որ գուլպաների վիզը երևում է:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԻՍՏՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Հասակը.—Ընդհանրապէս մալականները պսակում են տղաներին 19, իսկ աղջիկներին՝ 17 տարեկանից ոչ պակաս. և ամուսնացող գոյգի տարիքների տարբերութիւնը շատ հազիւ է պատահում որ մեծ լինի:

Մեծ մասամբ իրենք ծնողներն են ընտրում հարսնացուն, թէև միշտ առնում են տղի համաձայնութիւնը. սակաւ չի պատահում նաև, որ տղաներն իրենք ընտրէին իրենց հարսնացուն և աշխատէին առնել ծնողների հաճութիւնը:

Աղջիկ փախցնելու սովորութիւնն այս գիւղերում չկայ:

Նշանդրէք.—Երբ որոշում են նշանել որդուն, հայրն ու մայրը միասին գնում են հարսնացուի տունը, դռան առաջ կանգնում, ձեռքերը կրծքերին դնում, «Հայր մեր» շնչում և

յետոյ դիմելով տան տիրոջը՝ ասում են. «Խաղաղութիւն տանս այսմիկ»։ Նրան պատասխանում են. «Խաղաղութիւն եկողներիդ, համեցէք, նստեցէք»։ Ներս են մտնում և նստում սեղանի շուրջը, որի վրայ եփ է գալիս ինքնաեռը։ Սովորական խօսակցութիւնից յետոյ սկսում են թէյ խմել։ Եւ որովհետեւ տնեցիք արդէն իմացած են լինում սրանց գալու նպատակը, ուստի բերում են կարագ, մեղր, խորոված միս, հաց և այլն։

Լաւ ուտել խմելուց յետոյ, երբ նկատում են, որ հեշտաեռի մէջ այլ ևս ջուր չէ մնացել, — մալականները չափազանց սիրում են թէյը — տղայի հայրը դիմում է տանտիրոջ ասելով.

— Զգիտէ՞ք, թէ ինչի համար ենք եկել ձեզ մօտ։

— Զէ, պատասխանում են տան տէրն ու տիրուհին, շատ լաւ գիտենալով նրանց գալու նպատակը։

Նրանք յայտնում են իրենց ցանկութիւնը բարեկամանալու. աղջկայ ծնողներն էլ սիրով ընդունում են, միայն խընդրում են, որ ժամանակ տան աղջկայ կամքը հարցնելու։ Սովորաբար աղջիկն այդ օրը տանը չի լինում, «Համեստութիւնից» դրդուած նա գնում է մի բարեկամի տուն։

Հետեւեալ օրը գալիս է աղջիկը, մայրը յայտնում է որ նրան ուզում են, կը կամենայ գնալ։ «Եթէ կըտաք, կերթամ», պատասխանում է աղջիկը և լաց լինելով ընկնում մօր պարանոցով։

Նոյն օրը երեկոյեան գալիս են տղայի ծնողները, ինչպէս և միջանի մօտիկ բարեկամներ։

Սովորական բարեկից յետոյ տղայի հայրը հարցնում է աղջկայ հօրը։

— Հը՛, Բնչպէս է խօսում ձեր ապրանքը։ (Ну, что теперь, какъ вашъ товаръ говоритъ.)

— Մեր ապրանքը մղում է դէպի ձեր ձեռքը (Нашъ товаръ на вашу руку тянетъ), կատակով պատասխանում է աղջկայ հայրը։

Իսկոյն վեր են կենում, հայրերը միմեանց ձեռք սեղմում, աղջկայ մայրը տալիս է տղի մօրը մի թաշկինակ, իսկ տղի հայրը աղջկայ հօրը՝ հինգ բուրլի դրամ։

Նոյն օրը, կամ մի քանի օր լետոյ, աղջկայ տանը կազմուած Հրաւերքում խնամիները բարեկամների միջամտութեամբ որոշում են դիւսադինը (КЛАДКА), այսինքն այն գումարը, որ տղայի հայրը վճարում է աղջկայ հօրը՝ յատկապէս օժիտ պատրաստելու նպատակով: Այս գումարը տաստանուում է 50—120 ռուբլու մէջ:

Վերադառնալով տուն, տղայի մայրը կապում է որդու վզից մի թաշկինակ և յայտնում նրան, որ արդէն նշանուած է: Մի քանի օր լետոյ երկու խնամիները գնում են քաղաք հարսանիքի պատրաստութիւն տեսնելու: Այս միջոցին նշանուած տղան իւր մի քանի ընկերների հետ գնում է իւր նշանածի մօտ և օգտուելով ապագայ աներոջ բացակայութիւնից, ուրախ ժամանակ է անցկացնում:

Երբ խնամիները վերադառնում են քաղաքից, գնած կտորեղէնները տանում տալիս են հարսնացուին, իսկ իրենք գրնում են ճաշելու տղայի տունը: Այս ժամանակ հարսնացուի ընկերուհիները հաւաքւում են նրա մօտ և սա լաց լինելով ասում է նրանց.

Սիրելի ընկերուհիներ, սպիտակ աղանձակներ, մի բարկանաք ինձ-դառն-թշուառիս վրայ, որ ես ընդառաջ չեկայ ձեզ ճանապարհին: Ուզում էի դուրս գալ, ընդառաջ ելնել, թուլացան սպիտակ ձեռքերս, տապալուեց աղատասէր գլուխս: Ես հանդիպեցայ ձեզ իմ հարազատ մօրս ներկայութեամբ, լուսաւոր սենեակում:

(Любезные подруженьки, бѣлые голубушки, не прогнѣвайтесь на меня горькую-несчастную, что я не вышла, не встрѣтила васъ при пути дороженькѣ. Хотѣла выйти встрѣтить, поломились бѣлыя рученьки, свалилась буйная головушка съ плечъ долой, я васъ встрѣтила при родной матушкѣ, въ свѣтлой горенкѣ).

Ընկերուհիները միիթարում են նրան և շտապում նայելու գնած իրերը: Եւ լետոյ իսկոյն սկսում են ձեւել և կարել օժիտը, որ տւում է մօտ մի շաբաթ: Այս ամբողջ շաբաթուայ ընթացքում դրանց պատուհանի մօտ հաւաքւում են

գիւղի Հետաքրքիր աղջիկները, պատանիները՝ դիտելու, իսկ գիւղում խօսուում է, թէ այս ինչի տանը «Հաւաքել են աղջիկներին, ուրեմն և՛ օժիտի պատրաստութիւնն սկսուել է»:

Հին սովորութեամբ Հարսնացուն ընկերուհիների մօտ պէտք է լաց լինի և «ափսոսալ» օրիորդական ազատութիւնը կորցնելու Համար: Ուստի և նա Հեկեկալով ասում է.

Հանգչում է խաւարամած վերջալոյսը,
Ինձ սկսում է բռնել թախիժն ու տրտմութիւնը.
Կուսական գեղեցկութիւնը վերանում է ինձանից.
Կնոջ չորութիւնը տիրապետում ինձ.

Սնցաւ իմ ազատութիւնը.

Էլ չեմ կարող չափից դուրս գրօնել,
Մետաքսեայ խոտերում խճճուիլ,
Մթին անտառներում մոլորուիլ,
Ինձ օտար մարդկանց մէջ կարող ես գտնել:

(Темная зорюшка истухаеть,
Ко мнѣ грусть-тоска приступаеть,
Дѣвичья кросота спадаеть,
Бабыя сухота нападаеть,
Пошла моя волюшка,
Туляй, не загуливайся.
Въ шелковой травѣ не запутывайся,
Въ темныхъ лѣсахъ не заблуживайся,
Меня въ чужихъ людешкахъ провѣдывай.)

Ընկերուհիներն սկսում են մխիթարել, և նա դադարում է լաց լինելուց:

Հարսանիքից մի օր առաջ Հարսնացուն Հաւաքում է ընկերուհիներին և երկու կամ երեքի Հետ գնում բաղանիս, լողանում և վերադառնում, մօտենում ամէն մի ընկերուհուն և շնորհակալ լինում բաղանիսի Համար ասելով.

Չնորհակալ եմ, Տէր, բաղնիսի, փափուկ անելի, հոտաւետ սապնի, թեթեւ գոլորշու Համար: (Спаси Господь, за баньку. за мягкій вѣничекъ, за душистое мыльце, за легкій парокъ.) և այսպէս բոլորին ձեռք տալուց լետոյ երբ մօտենում է իւր ամենամօտիկ ընկերուհուն, սա սանրում է նրա մազերը, իսկ Հարսնացուն երգում է.

Առ ձեռք,
 Ոսկրէ սանր,
 Սանրիւր խարտեաշ ծամերը
 Կոկիկ-կոկիկ:
 Հիւսիւր խարտեաշ ծամերը
 Մանր մանր,
 Իմ ազատասէր գլուխս ծածկեց
 Սպիտակ ձիւնը.
 Կտրեց իմ շէկ ծամերը
 Դաժան ցուրտը.
 Կողպեցին իմ շէկ ծամերը
 Եօթանասուն կողպէքով,
 Ձգեցին այն երկաթեայ բանալիները
 Կապուտակ ծովը.
 Երբ կրցամաքի փոթորկալի ծովը,
 Այն ժամանակ միայն կրդառնայ կուսական ազատու թիւնը:
 (Бери ты въ свои рученьки
 Костяной гребешокъ,
 Чеши ты косу русую
 Гладко-на гладко,
 Плети ты косу русую
 Мелко-на мелко.
 Покрыль буйную головушку
 Вѣдый снѣжокъ,
 Подсѣкъ мою косу русую
 Лютый морозъ.
 Заменяли косу русую
 Семьдесятъ замковъ,
 Забросили тѣ ключи желѣзные
 Во синее море;
 Когда уйдетъ море бурное.
 Придетъ воля дѣвичья.)

Մազերը հիւսում են, հարսնացուին հագցնում: Դալիս է փեսադուրը (дружка, սովորաբար փեսացուի աւագ կորայրը) և հարցնում է, թէ հարսը պատրաստ է. և եթէ պատրաստ է, խնդրում է թագաւորի շորերը, որ նոյնպէս հարսնացուի ընկերուհիներն են կարել:

Այս կարողները շորերն հաւաքում և մի գունաւոր երկար ժա-

պաւէնով ախպէս կապում են, որ փեսաղբէրը չկարողանայ այդ ժապաւէնի ծայրերը գտնել: Փեսաղբէրը խնդրում է ցոյց տալ, թէ ինչպէս է կապուած շորերը և առաջարկում է նրա համար փրկանք: Սկսում են սակարկել, իվերջոյ փեսաղբէրը տալիս է կարողներից ամէն մինին մի մի բուրլի և մի մի կտոր սապոն: Ապա վերցնում է հանգերձները և տանում հազցնում թագաւորին: Հաւաքւում են ծերունիները, բարեկամները, թագաւորի ընկերները: Բոլորը միասին սկսում են երգել մի որոշ սաղմոս, որից յետոյ թագաւորին բերում են շրջանի մէջ և պրեսվիտէրը մի աղօթք է կարդում. թագաւորը այս միջոցին չոգում է իւր ծնողների առաջ և խնդրում օրհնել իւր օրինաւոր ամուսնութիւնը: Ծնողները դնելով իրենց աջ ձեռները որդու գլխին՝ օրհնում են և իվերջոյ ասում. «Աստծու խաղաղութիւնը թող հանգչի գլխումդ յաւիտեանս յաւիտեանից»: Ապա երեք անգամ որդին երկրպագում է ծնողներին, սրանք էլ իւրաքանչիւր անգամ մինչև ծնկները խոնարհւում են նրա առաջ և համբուրւում: Ապա պրեսվիտէրը կարդում է «Համբարձի դաչս ի լերինս» (120դ) սաղմոսը, որից յետոյ բոլորը երգում են 147դ սաղմոսը:

Անմիջապէս բոլոր հարսնեւորները, բացի թագաւորի ծնողներից, գնում են հարսնացուի տուն:

Այստեղ ընդհանուր աղօթքից յետոյ հարսնացուին իւր ընկերուհիները բերում են առաջ: Սա երեք անգամ երկրպագում է իւր ծնողներին, համբուրւում նրանց հետ և կանգնում թագաւորի դէմը: Պրեսվիտէրը հարցնում է պսակուողներին, թէ նրանք իրենց ազատ կամքով են ամուսնանում, և թէ նրանց մէջ ազգակցութիւն չկայ: Երբ գոհացուցիչ պատասխան է տրւում, թագաւորն ու թագուհին երկրպագում են միմեանց և համբուրւում, իսկ պրեսվիտէրը աղօթում է: Ապա հարսն ու փեսան միասին երգւում են ասելով... երգւում ենք սուրբ Աւետարանով... որ աստուածային օրինաց հրամանով կամենում ենք միանալ օրինաւոր ամուսնութեամբ, մեր ծնողաց օրհնութեամբ և համաձայնութեամբ և մեր անձնական ցանկութեամբ... խոստանալով միմեանց հաւատարիմ լինել մինչև մեր կեանքի վերջը:

Ապա թագաւորը միայն ասում է,
«Բացի սրանից ուրիշ կին չպիտի ունենամ».
Հարսնացուն աւելացնում.

«Ես էլ երգում եմ բացի սրանից ուրիշ ամուսին չունենալ»
Այս ժամանակ պրեսվիտէրը դառնում է Հարսնեւորներին
և ասում. Լսեցի՞ք, եղբայրներ, և վկայ էք:

Անմիջապէս Հարսնացուի Հայրը բռնում է Հարսի ձեռ-
քից և տալիս է թագաւորին ասելով.

«Տալիս եմ դուստրս քեզ կնութեան. աստուածային օրէն-
քի Համաձայն տար նրան Հօրդ տունը»:

Պրեսվիտէրը կրկին աղօթում է, բոլորը չօքում են, ապա
վերկենում, նորապսակները միասին երկրպագում ծնողներին
և խնդրում, որ իրենց օրհնեն. սրանք էլ օրհնում են՝ դնելով
իրենց աջ ձեռքերը նրանց գլխների վրայ:

Յետոյ սաղմոսներ երգելով գնում են փեսայի տունը, մի-
այն առանց Հարսի ծնողների: Փեսայի Հայրն և մայրը դուան
առաջ դիմաւորում են նրանց, փեսի եղբայրը ասում է նրանց.
«Զոր խնդիրը կատարեցինք, ուրախացէ՛ք»:

Հայրը պատասխանում է. «Փառք Աստծու որ կատարեցիք,
խնդրում եմ ներս Հրամէ՛ք»:⁴ Երբ տուն են մտնում, կանգնում
են, «Հայր մեր» ասում, ապա՝ «Խաղաղութիւն ձեր տանը» (МИРЪ
ДОМУ ВАШЕМУ):

— Խաղաղութիւն ձեր մուտքին (МИРЪ ВХОДУ ВАШЕМУ) պա-
տասխանում են ծնողները: Անմիջապէս բոլորը միմեանց Հետ
Համբուրւում են, յետոյ պրեսվիտէրը խրատ է կարդում թէ
ինչպէս նորապսակները միմեանց Հետ պիտի ապրեն սիրով,
Հաւատարմութեամբ և ծնողներին յարգելով: Փեսաղբէրը տա-
նում է նորապսակներին միւս սենեակը, իսկ ինքը գնում բե-
րում Հարսի Հօրն ու մօրը, երբ նորից աղօթում են, Համբուր-
ւում և ապա թէյ խմում, ճաշում ցրւում:

Հետևեալ օրը կրկին Հաւաքւում են երկու կողմերի բա-
րեկամները, ուտում խմում և ի վերջոյ միջնորդն (СВАХА) նը-
ւէրներ է Հաւաքում Հարսի Համար նախ փեսի և ապա Հար-
սի բարեկամներից: Մօտաւորապէս Հաւաքւում է 10 բուբլի:

Նուէրներ տալիս մատուցում է մի որևէ ըմպելի, որի ժամանակ ոմանք բղաւում են „գառն է“ (ГОРЬКО), իսկոյն Հարսն ու թագաւորը համբուրւում են:

Սովորաբար Հարսանեկան ծախսերը աղջկայ տիրոջ Համար շատ անդգալի են, մինչդեռ տղի տիրոջ Համար Հասում են 200—250 ռուբլու:

ՀՆՏՈՆԵԿԱՆ ԿԵՆՔ

Մսւականներն ապրում են առաւելապէս մեծ գերդաստաններով. վեց եղբայրների, երեսուն և Հինգ Հոգուց բաղկացած գերդաստաններ բաւականաչափ կան: Այսպիսի նահապետական գերդաստաններում իշխանութիւնը, կարողութիւնը և աշխատանքի բաժանումը կենտրոնանում է Հօր անձնատրութեան մէջ:

Նրա մահից յետոյ այդ իրաւունքն անցնում է գերդաստանի աւագ անդամին՝ նրա եղբօրը կամ աւագ որդուն: Միայն այս դէպքում այդ իշխանութիւնը փոքր ինչ սահմանափակւում է. սրանք պարտաւոր են գլխաւոր խնդիրներում խորհրդակցիլ գերդաստանի չափազատ տղամարդկանց հետ:

Գերդաստանի ներքին կառավարութիւնը պատկանում է մօրը, իսկ նրա մահից յետոյ՝ աւագ Հարսին: Հարսները սկեսուրին «Հարսնութիւն չեն անում», այսինքն խօսում են Հետր: Տնային աշխատանքները Հարսները ոչ թէ Հայրի պէս աւանդական բաժանման Համեմատ են կատարում, այլ Հերթով:

Գերդաստանի անդամների սեպհականութիւնն ընդհանուրին է պատկանում, չնայելով որ մի եղբայրը շատ, իսկ միւսը քիչ է վաստակում: Երբեմն կանայք իբր մասնաւոր սեպհականութիւն ունենում են մի քանի գլուխ կենդանի, որոնցից օգտւում է ամբողջ գերդաստանը և բաժանուելիս միայն տրւում իրեն Հարսին:

Բաժանուելիս ամբողջ գոյքը բաժանում են միայն եղբայրների վրայ Հաւասարապէս, յատկացնելով չամուսնացածներին՝ Հարսանիքի Համար անհրաժեշտ գումարները: Քոյրերին ոչ մի բաժին չեն Հանում:

Ջաւակ չունեցողները որդեգրում են մի որևէ երեխայ, գիւղական տանուտիրոջ մօտ այդ մասին արձանագրութիւն կազմում և ապա մեռնելիս՝ նրան թողնում իրենց կարողութիւնը:

Տնփեսայութիւնն էլ գոյութիւն ունի սրանց մէջ և տընփեսան ժառանգում է աներոջ կարողութիւնը:

ԱնչափաՀաս որդիների վերայ Հասարակութիւնը Հոգաբարձու է նշանակում առաւելապէս մի ազգականի և նրանից միշտ Հաշիւ պահանջում:

Այրի կինը կամ շարունակում է ապրել կեսրանց տանը, կամ ամուսնանում է: Եթէ որդիներ ունի՝ սովորաբար տանում է իւր Հետ: Այս դէպքում Հասարակութիւնը որոշում է, թէ ինչ պիտի Հասնի այս երեխաներին նրանց անբաժան Հօրեղբայրներից և այս մասի վրայ Հոգաբարձու նշանակում, որպէս զի որքեբը մեծանալիս ժառանգեն:

Սրանց մէջ ապահարգանք չի թողատրուում. միայն երբ կիւնն անընդունակ է Համարում ամուսնական կեանքին, ծերերի խորհուրդը թող է տալիս սրա ամուսնուն ամուսնանալ մի ուրիշի Հետ, իսկ առաջի կնոջն ապրուստի միջոց տալ:

Մալականներն առաւօտը թէյ են խմում և Հետը Հաց ուտում. կէսօրին ճաշում, ուտելով սովորաբար մի տեսակ կերակուր. երեկոյեան կրկին թէյ խմում, Հետը ցամաք Հաց և ճաշի կերակրի մնացորդները: Ընդհանրապէս չափազանց սիրում են թէյը և մեծ քանակութեամբ խմում: Առաւելապէս գործ են ածում կաթ և կարտոֆիլ:

Տ Ղ Ս Ք Ե Ր Ք

Մալական կանայք երկունքի ժամանակ ընդհանրապէս դիմուի են իրենց տան բաղնիսը, ուր մի տատմօր և այլ կանանց օգնութեամբ ազատում են: Սակայն անմիջապէս դուրս չեն գալիս բաղնիսից, այլ մնում են այդտեղ երեք օր պառկած և օրը երկու անգամ լողանում: Չորրորդ օրը նրանք գալիս են տուն, ուր երկու օր ևս պառկած մնում, ապա վեր կենում և զբաղւում միայն իրենց երեխայի Հոգսով, որովհետև արու զաւակ բերողը քառասուն, իսկ աղջիկ՝ ութսուն օր անսուրբ է Համարում. ծննդկանը իրաւունք չունի ոչ Հաց թխելու և

ոչ կերակուր եփելու, նրա հետ ոչ ոք, բայի ամուսնուց, չի ճաշում: Պղծութեան օրերը անցնելուց յետոյ ծննդկանը լողանում է, լողացնում երեխային և ապա նրան դրկած, նույն է ժողովարան, ուր խնդրում է աղօթել իւր և իւր երեխայի համար, նրանք էլ աղօթում են: Յետոյ մի օր հրաւիրում են ծերերին և բարեկամներին տուն, ուր աղօթելուց յետոյ թէյ են խմում, ճաշում և ցրւում: Սովորաբար ծնողները իրենց ազգականների անուններից մինն ընտրելով տալիս են իրեխային:

Թ Ա Ղ Ո Ւ Մ Ն

Հիւանդ ժամանակ հրաւիրում եմ ծերունիներին, որ զան հիւանդի մօտ աղօթեն, թերևս հիւանդը լաւանայ:

Ննջեցեալին տաք ջրով լողացնում են, սպիտակեղէն հագցնում. և որովհետև դազաղի վրայ կտոր չեն քաշում, ուստի՝ եթէ ննջեցեալը ծեր է՝ սև, իսկ եթէ երիտասարդ է՝ կարմիր ծածկոցով ամբողջովին ծածկում են: Ապա հրաւիրում են ծերունիներին, որոնք աղօթում են, սաղմոսներ երգում, կանայք լացով ձայնակցում են տղամարդկանց սաղմոսերգութեան: Սրանց մէջ չկայ հանդերձներ պատառելու, ննջեցեալին գրկել համբուրելու սովորութիւնը:

Ապա թէ տղամարդիկ և թէ կանայք ուղեկցում են ննջեցեալին մենչև գերեզմանատուն, տանելով նրան՝ եթէ չափահաս է՝ չորս մարդկանց ուսերին յենած երկու ձողերի վրայ. իսկ եթէ փոքր է, միայն մի մարդ առնում է կռան տակ:

Գազաղը դնում են գերեզմանի աջ կողմում, աղօթում են, ծածկոցը վերցնում և դազաղը առանց մէջը միքիչ հող ածելու իջեցնում են գերեզման, որ մօտ երկու և կէս արշին խորութեան է լինում: Գերեզմանը հողով լցնելուց յետոյ կրկին աղօթում են. սաղմոսներ երգում և վերադառնում ննջեցեալի տուն, ուր կրկին աղօթում են, նստում թէյ խմում, հաց ուտում, ապա վերստին խմբով աղօթում և ննջեցեալին արքայութիւն մատնելով ցրւում: Անց շաբաթից յետոյ կրկին հաւաքւում են ննջեցեալի տունը հողուհացի, խմբով աղօթում, երգում, թէյ խմում, հաց ուտում և ցրւում: Ոմանք մի քանի տարի շարունակ տարին մի անգամ կրկնում են այս հողուհացը: